

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

ՄԵԾԱԳՈՑՆ ՊՈՍԹՈՆԻ

-----o-----

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻԻԻ, ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀ ՈՒՐԴԻ

Ե Ի

ԵՆԹԱՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ

1971 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐՈՒ ՀԱԽԱՔԱԾՈՑ

\*\*\*\*\*

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH OF GREATER BOSTON

145 Brattle Street

Cambridge, Massachusetts 02138

----- o -----

1971 REPORTS

of the

PARISH PRIEST

PARISH COUNCIL

and

SUBORDINATE BODIES

\*\*\*\*\*

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH OF GREATER BOSTON

ANNUAL AND FINANCIAL REPORTS

<u>CONTENTS</u>	<u>PAGE</u>
PASTOR'S REPORT - ARMENIAN	2
PASTOR'S REPORT - ENGLISH	7
PARISH COUNCIL REPORT - ARMENIAN	11
PARISH COUNCIL REPORT - ENGLISH	17
PARISH COUNCIL INCOME	22
PARISH COUNCIL DISBURSEMENTS	23
CHURCH BUILDING FUND	24
CHURCH SINKING FUND	25
SENIOR WOMEN'S AUXILIARY ANNUAL REPORT	26
SENIOR WOMEN'S AUXILIARY FINANCIAL REPORT	27
YOUNG WOMEN'S AUXILIARY ANNUAL REPORT	28
YOUNG WOMEN'S AUXILIARY FINANCIAL REPORT	29
TRINITY MEN'S UNION ANNUAL AND FINANCIAL REPORT	30
CHOIR ANNUAL REPORT	31
CHOIR FINANCIAL REPORT	32
EREVAN CHORAL SOCIETY ANNUAL REPORT	33
EREVAN CHORAL SOCIETY FINANCIAL REPORT	35
SUNDAY SCHOOL ANNUAL AND FINANCIAL REPORT	36
ARMENIAN SCHOOL ANNUAL REPORT	37
ARMENIAN SCHOOL FINANCIAL REPORT	38
A.C.Y.O.A. JUNIORS ANNUAL AND FINANCIAL REPORT	39
CHELSEA WOMEN'S AUXILIARY	40
LYNN-SALEM-PEABODY WOMEN'S AUXILIARY	41

ՄԵՍԱԳՈՅՆ ՊՈՍԹՈՆԻ

Ս. ԵՐՐՈՐԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒՒ

1971 ՏԱՐՈՒԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

-----0-----

1971 տարին ալ Աստուծոյ ողորմութեամբ անցուցինք ողջամբ եւ առողջութեամբ: Ընթացիկ տարուան ընթացքին մեր ունեցած հովուական եւ եկեղեցական գործունէութիւնը կ'ամփոփենք ստորեւ.-

1. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՔ.- Ամբողջ տարուան ընթացքին, տօնական գլխաւոր օրերուն եւ բոլոր կիրակիներուն ունեցանք պաշտամունք, ժամերգութիւն, պատարագ եւ այլ արարողութիւններ: Քարոզ խօսուեցաւ անխափան հայերէն եւ անգլերէն լեզուներով Հոգւ. Տ. Օջական Վրդ. Մինասեանի եւ մեր կողմէ: Քարոզներու մէկ մասին նիւթը եղաւ արդի աշխարհը յուզող խընդիրներու շուրջ:

2. ՄԿՐՏՈՒԹԻՒՆՔ.- Չաւակաբերութեան տեսակէտէ մեր համայնքը 1971ին շատ արդիւնաւոր չեղաւ: Անցեալ տարի կատարած էինք 40 մկրտութիւն: Այս տարի թիւը իջաւ 21ի: Մէկ կողմէ ուրախալի է որ ծնողներ մեծաւ մասամբ վարժուեցան իրենց զաւակները կանուխ մկրտել տալու: Բայց միւս կողմէ գիտենք թէ տակաւին շատ ծնողներ կան, որոնց զաւակները կը մեծնան առանց մկրտութեան, այսինքն՝ առանց Աստուծոյ շնորհքը ընդունելու եւ ի տղայ տիոց առանց եկեղեցւոյ զաւակ դառնալու: Այնպիսիներուն մեղքը բնական է իրենց ծնողներուն կ'երթայ, որ պատասխանատու են իրենց զաւակներուն քրիստոնէացման:

3. ՊՍԱԿԱԴՐՈՒԹԻՒՆՔ.- Այս ալ քանակով իջաւ այս տարի: Կատարեցինք 11 պսակադրութիւններ: Իրագեկ ենք որ շատ երիտասարդներ խառն աճուսնութեան պարագային իրենց ապագայ կողակցին եկեղեցին երթալու կը համակերպին: Այս պարագան մէկ կողմէ Հայաստանեայց Եկեղեցւոյ կրօնական եւ ազգային դաստիարակութեան տկարութիւնը կը ցուցնէ, իսկ միւս կողմէ, եւ առաւելաբար, ամերիկեան դպրոցներու դաստիարակութեան եւ երկրին մէջ տիրող արդի հոսանքին զօրութիւնը: Անել կացութեան մատնուած են նաեւ բոլոր արեւելեան եկեղեցիները եւ անոնց համայնքները: Երրորդ պարագան ալ մեր համայնքին շատ տարածուն ըլլալն է: Այդ իսկ պատճառաւ նորահաս սերունդը, մանուկ եւ պատանի, կարելիութիւն չունի եկեղեցի եւ եկեղեցւոյ հայ եւ կիրակնօրեայ դպրոցները գալու, եթէ ծնողներ չբերեն: Արդիւնքը այն կ'ըլլայ որ հայ անունը կրող երիտասարդներ հայկական զգացումէ եւ գիտակցութենէ զուրկ կը մնան եւ շատ դիւրաւ կը հետեւին օտարներու հետքին:

4. ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆՔ.- Մեռնողներու թիւն ալ իջաւ այս տարի: Ունեցանք 41 թաղում: Վերջին տարիներու ընթացքին յստակ կերպով կը նշմարուի հին սերունդին նոսրացումը: 20 տարի առաջ առաւօտեան ժամերգութեան ատեն կ'ունենայինք 60-70 հոգի, մինչդեռ այսօր ունինք 2-3 հոգի միայն: Եկեղեցի կանուխ եկողները յակնաբէ անուանէ կը ճանչնայինք. բոլորն ալ առ Աստուած փոխուեցան: Միւս կողմէ ալ տարեցները հնարաւորութիւն չունին իրենք իրենց եկեղեցի գալու: Թաղումներու պարագային միշտ դամբանական խօսած ենք հայերէն կամ անգլերէն լեզուով մխիթարելու համար ընտանիքին վերապրող անդամները եւ քառասունքի ընթացքին ալ ցաւակցական այցելութիւն տուած եւ փոխան ծաղիկի ցանկերը պատրաստած ենք:

5. ԴԻՒԱՆԱԿԱՆՔ.- Հակառակ ծիսակատարութեանց նուազելուն եկեղեցւոյ գործունէութիւնը բազմացած է, որով դիւանական գործերն ալ տարուէ տարի

բազմապատկուած է: Առաջ հեռախօսի մէկ թիւը շատ էր, իսկ հիմա երկու թիւերը քիչ կու գան: Գէմպրիճի նամակատունը կը հաստատէ թէ ամենէն շատ առաքում ունեցող եկեղեցին մերն է: Ատիկա ինքնին կ'ապացուցանէ մեր գըրասենեակին բեղուն գործունէութիւնը եւ եկեղեցիին ու իր ժողովուրդին իրարու հետ ունեցած սերտ կապակցութիւնը եւ հաղորդակցութիւնը: Մեր գրասենեակին մէջ ղեկավարի մը, տեղական բառը գործածելով՝ մէնէյճըրի մը լման ժամանակը առնող գործ կայ, որ շատ քիչերուն ծանօթ է այս պարագան ալ: Սիրով ու նուիրումով կատարած ենք այդ բոլորը մեր եկեղեցւոյ պայծառութեան, յառաջդիմութեան եւ առաւել կանոնաւորման համար:

6. ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀ ՈՒՐԴ. — Նախագահած ենք Ծխական Խորհուրդիս բոլոր ժողովներուն: Յաճախ ջանացած ենք Խորհուրդին գործերը դիւրացնել ինչ ինչ գործերու կատարումը յանձն առնելով կամ պարտականութիւններ ստանձնելով: Մեր յարաբերութիւնը եղած է բարեկամական ու սիրալիր: Հետզհետէ երիտասարդ ու յոյսեր կը միանան Խորհուրդին: Մեր ատենապետը՝ Պ. Արթըր Աբգարեան՝ Խորհուրդի ամենէն երիտասարդն է տարիքով, որուն վստահուեցաւ ամենէն պատասխանատու պաշտօնը իր ընկերներուն կողմէ: Եկեղեցւոյ գործին տարողութիւնը նկատի առնելով անդամներուն թիւը 15ի բարձրացուեցաւ, բայց տարուան մը փորձէն ետքը անգործնական գոնուեցաւ եւ յառաջիկային դարձեալ պիտի իջնէ 11ի: Ատենապետը մեզի հետ միշտ խորհրդակցած է առանձինն՝ բարդ հարցերու շուրջ եւ մենք՝ իրեն հետ: Թեմական պատգամաւորներէն ոմանք յաճախ ներկայ եղած են Ծխական Խորհուրդի ժողովներուն, իսկ Պ. Նուպար Հինդլեան՝ միշտ: Բաց աստի Պ. Նուպար Հինդլեան շատ մը պարտականութիւններ ալ ստանձնելով կատարած է զանոնք: Ծխական Խորհուրդը միշտ համերաշխ եղած է իր գործունէութեան եւ որոշումներուն շուրջ:

7. ԶԱՐՏ ՈՒՂԱՐՈՒԹԻՒՆ. — Մեր ամէնօրեայ անմիջական գործակիցները մեր քարտուղարներն են՝ Տիկիներ Կրէյս Յակոբեան եւ Վարդուհի Մէմիշեան: Առաջինը կու գայ շաբաթը երկու օր եւ կը զբաղի եկեղեցւոյ հաշուական գործերով ընդհանրապէս: Իր հաշիւներուն ճշդութեան ու կանոնաւորութեան շատ բծախնդիր անձ մըն է: Առանց վաւերացման ոչ մէկ փոխգիր կը գրէ: Միշտ եկեղեցւոյ շահը կը փնտռէ: Իսկ երկրորդը՝ կ'աշխատի շաբաթը հինգ օր եւ կը կատարէ քարտուղարական բոլոր եւ ամէն տեսակ գործերը եւ արձանագրութիւնները: Կ'օգնէ ու կը դիւրացնէ նաեւ եկեղեցապատկան բոլոր մարմիններու բազմազարկան եւ առաքման գործերը: Հեռախօսային բոլոր հաղորդակցութիւնները կը կատարուին իր միջոցաւ: Սքանչելի մթնոլորտ մը կը տիրէ մեր գրասենեակին մէջ, եղբայրական ու քրոջական, առանց վէճի, կատարեալ համերաշխ վիճակի մը մէջ: Այս հոգեւոր հաստատութեան մէջ երկուքն ալ տան անդամ եւ հարազատ դաւակ կը նկատեն իրենք զիրենք:

8. ՍԱՐԿԱԻԱԳԱՅ ԴԱՍ. — Ունինք չորս աւագ եւ չորս կիսասարկաւագներ, որոնք հաւատարմօրէն կը սպասարկեն Սուրբ Սեղանին Ս. Պատարագի ընթացքին: Մեր աւագ սարկաւագներու շարականագիտութեան շնորհիւ ժամերգութիւնները լրիւ կը կատարուին մեր եկեղեցիին մէջ: Մեր աւագ սարկաւագներն են՝ Լեւոն Թէրզեան (որ Պրաթընէն կու գայ), Տիրան Տիմեան, Պետրոս Առաքելեան եւ Վահէ Թաշեան (որ Փիպատիէն կու գայ): Այս վերջինը այս տարի սրտի հիւանդութեամբ մը երկար ատեն հիւանդանոց մնաց ու ծանր գործողութեան մը ենթարկուեցաւ: Բարեբախտաբար Աստուած լսեց մեր բոլորին ձայնը եւ մեզի վերադարձուց զինք մահուան դռնէն: Հազիւ կազուրուած վերսկսաւ իր եկեղեցական նուիրեալ ծառայութեան զԱստուած փառաբանելով: Իսկ կիսասարկաւագներ Գարեգին Պետրոսեան, Սուրէն Մեծօրեան, Ռուբէն Թիրէճեան եւ Կրէկըրի Գրիգորեան կը ծառայեն Ս. Սեղանին երգելով, բուրվանելով եւ քնոցակրութեամբ: Մեր մոմակալները փոխն ի փոխ կու գան Կիրակնօրեայ Դարձրոցէն, կը վարժուին ու կը սիրեն իրենց պաշտօնը: Կը յուսանք թէ ապագային այս փոքրիկները մեծերուն հետքերուն հետեւելով անոնց տեղը կը բռնեն:

9. ԴՊՐԱՅ ԴԱՍ. — Մեր Դպրաց Դասը մեր եկեղեցւոյ փայլն է: Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ դպրաց դասը իր յոյժ կարեւոր տեղն ունի, նկատելով որ մեր բոլոր արարողութիւնները ձայնաւոր են: Ես պիտի ըսեմ որ Հայաստանեայց եկեղեցւոյ խորհուրդն իսկ հոն է, որովհետեւ մեր եկեղեցւոյ արարողութիւնը

առաւելաբար պաշտամունք է: Եւ պաշտամունքով կը փառաբանենք զԱստուած: Մեր դպրապետ Հոգ2. Տ. Օշական Վրդ. Մինասեան, հակառակ իր Ֆիզիքական ծանօթ վիճակին, գերազոյն ճիգ կը թափէ որ երգեցողութիւնը ըլլայ կատարեալ եւ առինքնող: Եթէ մեր դպրաց դասի անդամ-անդամուհիները կարենան լման կազմով միշտ ներկայ ըլլալ, կրնամ ըսել թէ մեր Դպրաց Դասը կրնայ գերազանցել մեր թեմի բոլոր դպրաց դասերը: Ուրախալի երեւոյթ է որ այս տարի պատանի դպրուհիներ ունեցանք Կիրակնօրեայ Դպրոցէն եւ դուրսէն, որոնք հետզհետէ կը մարզուին դպրապետին ձեռքին տակ: Դպրաց Դասի վարչութիւնն ալ Պ. Նորայր Օտապաշեանի ատենապետութեամբ կազմակերպչական եւ ընկերային գործունէութիւնը կը ղեկավարէ բարւոք կերպով: Դպրաց Դասը այս տարի դժբախտութիւնը ունեցաւ մշտնջենապէս կորսնցնելու իր երկարամեայ անդամներէն մին՝ Ներսէս Յարութիւնեանը՝ որ մանուկ հասակէն սկսեալ շուրջ քառասուն տարի եկեղեցւոյ ծառայած է իր ձայնով:

10. ԼՈՒՍԱՐԱՐ. — Եկեղեցւոյ մաքրութիւնը եւ կարգ ու սարքը անմիջականօրէն կապ ունի լուսարար Պետրոս Սրկ. Առաքելեանի հետ: Ան եկեղեցւոյ շինութեան առաջին օրէն սկսեալ իրեն համար աւագ պարտականութիւն ըրաւ զայն: Մաքուր պահել եւ հսկել: Իր մասնակցութիւնը կը բերէ բոլոր արարողութեանց եւ ծիսակատարութեանց: Մաքրութեան հոգը կը տանի նաեւ ծխատան, կը տպէ բոլոր հասցէները եւ նամակատուն կը տանի բոլոր առաքումները: Անոր համար եկեղեցւոյ ծառայել կը նշանակէ հոգեկան անդորրութիւն զգալ:

11. ՀԻՒՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ. — Այս տարի եւս ունեցանք հիւր եկեղեցականներ, որոնց անունները կու տանք թուականի կարգով. —  
ա. — Կիրովականի (Հայաստան) հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վազգէն Բհնյ. Գարակէօզեան՝ որ Վեհափառ Հայրապետին կողմէ մեր թեմի հոգեւորականաց Համագումարին ղրկուած էր, Մայիս 23ին պատարագեց եւ քարոզեց մեր սրահին մէջ, եկեղեցին ներկուելու վրայ գտնուելուն պատճառաւ, իսկ կէսօրէ ետքն ալ ներկայ եղաւ Հայ Դպրոցի հանդէսին:  
բ. — Յուլիս 25ին անակնկալ կերպով Ս. Պատարագին ներկայ եղաւ նախկին առաջնորդ Գերշ. Տ. Տիրան Արքեպս. ներսոյեան եւ քարոզեց:  
գ. — Ս. Եկեղեցւոյս օծման տասներորդ տարեդարձին առիթով Մեզմեքեր 26ին պատարագեց եւ քարոզեց թեմիս նախկին առաջնորդ Գերշ. Տ. Սիրոն Արքեպսկոպոս Մանուկեան, որ մասնաւոր հրաւերով Տիթրոյթէն եկաւ:

12. ՊԱՏԱՐԱԳ ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԷՁ. — Տարուան ընթացքին, զանազան առիթներով, պատարագեցինք եւ քարոզեցինք հետեւեալ եկեղեցիներուն մէջ. —  
ա. — Փետրուար 18ին, Հինգշաբթի իրիկուն, Վարդանանց տօնին առիթով պատարագեցինք ու քարոզեցինք Ուոթրթաուինի Ա. Յակոբ եկեղեցւոյ մէջ:  
բ. — Յունիս 13ին պատարագեցինք եւ քարոզեցինք Լինի եպիսկոպոսական ջրըչ ավ տը Ինգարնէյշընի մէջ, Նորթ Շորի մեր հաւատացեալ ժողովուրդին համար, ուր երգեց նաեւ մեր Դպրաց Դասը:  
գ. — Յունիս 27ին մեր եկեղեցւոյն ներկուելու առիթով պատարագեցինք Ուոթրթաուինի Ա. Յակոբ եկեղեցւոյ մէջ:  
դ. — Դեկտեմբեր 5ին 'Ներեւան' Երգչախումբին Առաջնորդարանի Գավուզեան Սրահին մէջ ունենալիք ելոյթին առիթով պատարագեցինք եւ քարոզեցինք Նիւ Եորքի Ա. Վարդան Մայր Շահարին մէջ:

13. ԵԿԵՂԵՑԻՈՑ ՏԱՄՆԱՄԵԱԿԸ. — Սեպտեմբեր 26ին ամենաշքեղ եկեղեցական եւ աշխարհիկ հանդիսութիւններով տօնուեցաւ Ս. Եկեղեցւոյս օծման տասներորդ տարեդարձը ի պատիւ մեր ժողովուրդին նիւթական եւ քարոյական զոհողութիւններուն: Տօնակատարութիւնը պատուուեցաւ Ազգիս Վեհափառ Հայրապետ Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհաւորակութեամբ հեռագրով եւ իր անձնական նուէրով, որն է աւագ սեղանի Ս. Աստուածամօր նկարը, որ օծուեցաւ նոյն առաւօտ պատարագիչ Սիրոն Սրբազանի ձեռամբ: Հանդիսութեան աշխարհիկ մասը կատարուեցաւ Սթէթլըր-Էիթըն հիւրանոցին մէջ նոյն երեկոյ հոծ բազմութեան մը ներկայութեան, ուր պաշտօնապէս հրկիզուեցաւ եկեղեցւոյ պարտամուրհակը, մեծ ուրախութիւն եւ երջանկութիւն պատճառելով մեր ծխականներուն եւ հիացում օտարներուն: Այս առիթով հրատարակեցինք տասնամեակի պատմադիրը մը:

14. ԵՆԹԱՄԱՐՄԻՆՆԵՐ.— Ենթամարմիններէն Եկեղեցասէր Երէց Տիկնանց Միութեան բոլոր ժողովներուն ներկայ գտնուեցանք ու խօսեցանք, իսկ միւս ենթամարմիններուն՝ ամէն անգամ որ հրաւիրուեցանք: Գնահատելի է զոյգ Տիկնանց Միութիւններու գործունէութիւնը եկեղեցւոյ պայծառութեան համար: Մեզի համար ուրախալի է տեսնել Հայաստանեայց Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութեան կրտսերաց խումբին եռանդը եւ զօրացումը: Երէցներուն առարկութիւնը այն է որ երբ զալէն երթալ սկսին կը ցրուին աստ ու անդ տարբեր քաղաքներու համալսարանները:

15. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ.— Տարուան առաջին մասին շարունակեցինք մեր ամսօրեայ այցելութիւնները եւ քարոզները: Բայց դպրոցական նոր տարեշրջանին ունեցանք նոր խորհրդատու—կազմակերպիչ մը՝ յանձին Պ. ձորճ Գրիգորեանի՝ որ նոր ձեւով սկսաւ կազմակերպել դպրոցը դասարան առ դասարան պատարագի զանազան մասերուն աշակերտութիւնը եկեղեցի բերելով: Կը յուսանք թէ նոր մեթոտը առաւել արդիւնք պիտի տայ փոքրիկները եկեղեցի կապելու համար:

16. ՀԱՅ ԴՊՐՈՑ.— Հայ Դպրոցը ունեցաւ նոր վարչութիւն Պ. ձէք Փափագեանի տտեղաւորութեամբ եւ ժրջան աշխատութեամբ: Տեսուչ Պ. Ռուբէն Քիրէճեան նոր ձեւով խումբերու վերածեց աշակերտութիւնը. նուազեց ուսուցիչներու թիւը նիւթական խնայելով, բայց միանգամայն կրթական մասը զօրացնելով: Մեզի ալ դարձաւ ուսուցանելու պարտականութիւն տրուեցաւ նախկին շրջանաւարտներէն դասարան մը կազմելով: Կ'ուսուցանենք հայ լեզու եւ հայ մշակոյթի ծանօթութիւններ կու տանք շաբաթ առտունները:

17. ՏԱՃԱՐ.— 'Տաճար'՝ ամսաթերթիկով ամէն մարդ կը հետաքրքրուի: Բայց ամէն մարդ իր նիւթական փոքրիկ պարտականութիւնը չի կատարեր որպէս զի ան իր բացը գոցէ: 'Տաճար'՝ գրեթէ ամսօրեայ նամակ մըն է որ եկեղեցւոյ շուրջ տարուած աշխատանքներու մասին կը խօսի: Երանի թէ կարենայինք ծաւալը մեծցնել եւ բոլորին փափաքին գոհացում տայինք երկու լեզուներով համահասարակ երպով եկեղեցական եւ համայնքային լուրեր տալով, ինչպէս նաեւ փոքրիկ յօդուածներ: Այս բոլորը դրամէն եւ աշխատանքէն կախում ունի: Ներկայ վիճակով եւ դրութեամբ կարելիութիւն չունինք:

18. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՔ.— Այցելած ենք այն հիւանդներուն՝ որոնց մասին մեզի լուր տրուած է անոնց հիւանդանոց գտնուած պահուն: Շատ անգամներ ըսած ենք եւ այս տեղեկագրին մէջ դարձեալ կը կրկնենք, թէ՛ մեր եկեղեցին տեղական բնոյթ չունի եւ ոչ ալ մեր համայնքը, որպէս զի շաբաթը անգամ մը տեղական հիւանդանոց այցելենք եւ մեր հիւանդ ծխականները փնտռենք: Մեր եկեղեցւոյ իրաւասութեան ներքեւ հարիւրէ աւելի քաղաքներ կան եւ բոլորին մէջ ալ ծխականներ եւ հայեր կան: Մեր ժամանակին եւ ճամբորդութեան խնայելու համար կը խնդրուի հիւանդներու տէրերէն որ գրասենեակ հեռաձայններ եւ իրենց հիւանդներուն գտնուած հիւանդանոցներու անունները տան: Այս ձեւով վստահ կրնան ըլլալ թէ մենք անպայման կ'այցելենք իրենց հիւանդներուն ու կ'աղօթենք: Այցելած ենք նաեւ սգաւորներուն ու մխիթարած: Պարբերաբար այցելած ենք նաեւ ծխականներուն:

19. ԳՆԱՀԱՏԱՆՔ.— Սրտանց կը գնահատենք մեր Ծխական Խորհուրդին, եկեղեցապատկան բոլոր մարմիններուն, ինչպէս նաեւ մեր բարեպաշտ ծխականներուն անխոնջ գործունէութիւնը, անձնուէր նուիրումը, անշահախնդիր զոհողութիւնը եւ աւանդական եկեղեցասիրութիւնը, որոնց շնորհիւ մեր համայնքը, մեր եկեղեցին, մեր ազգը տասը տարուան կարճ ժամանակաշրջանի մը մէջ բոլորովին տէրն ու տիրականը դարձաւ այսպիսի փառահեղ ու գեղատեսիլ տաճարի մը եւ յարակից շէնքերուն: Թող անիկա դարեր կանգուն մնայ ի փառս Աստուծոյ եւ ի պատիւ հազարաւոր հայ հաւատացեալ հոգիներու, որոնցմէ շատեր առ Աստուած փոխուած են արդէն խաղաղ մտքով ու սրտով, զայն տեսնելէ ու վայելելէ ետք: Թող լոյս իջնէ անոնց գերեզմաններուն վրայ եւ Տէր Աստուած ապահով անդորրութիւն եւ երջանիկ երեւշատութիւն պարգեւէ վերապրողներուն:

20. ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ.— Մեր սրտագին շնորհակալութիւնները կը յայտնենք

տարեկան այս համագումարին առիթով Մխական Խորհուրդիս, Թեմական Պատգամա-  
ւորներուն, Եկեղեցւոյ երէց եւ կրտսեր բոլոր մարմիններուն, մեր հոգեւոր  
եղբօր Հոգշ. Տ. Օջական Վրդ. Մինասեանին, բարեշնորհ Սարկաւազ եղբայրնե-  
րուն, Դպրաց Դասի երգեցիկ խումբին, երգեհոնահարուհիին, մեր ժրաջան ու  
շնորհալի քարտուղարուհիներուն, մեր նուիրեալ լուսաքարին, մեր սրահներու  
հոգատարին, մեր ծխականներուն եւ բոլոր անոնց՝ որոնք մեզի հետ գործ ու-  
նեցան, մեզի օգնեցին ու մեր գործը ղիւրացուցին մեր եկեղեցւոյ պայծառու-  
թեան համար:

ԲԱԲԳԷՆ Ա. ԲՀՆՑ. ՄԱԳՍՈՒՏԵԱՆ

PASTOR'S REPORT FOR THE YEAR 1971

-----0-----

By the grace of God we have survived the year 1971 in good health. The resume of the activities for the year are as follows:

1. CHURCH SERVICES. - On all Sundays and on main feast days we had Divine Liturgy and other special services in the church. Sermons in English and Armenian were delivered on all occasions by the Very Reverend Oshagan Minassian and myself. The topics of some of these sermons were about present social problems.

2. CHRISTENINGS. - Apparently many children were not born this year in our parish. Last year we had 40 christenings while this year we only had 21. We are happy that parents are bringing their children to be christened. On the other hand we also know that there are many children who have not yet received the blessed sacrament of baptism. Parents are responsible for the Christian life of their children, therefore, please bring your children, whatever their age, so that they may receive the Grace of God.

3. WEDDINGS. - This year we performed only 11 weddings. We know that many Armenian young people get married in other churches. This shows the weakness of the Armenian church education and training. The unanimity of the American School education given to the youth is very strong which keeps the youth in one group, also the present day youth movement effects deeply on the new generation. It is not a secret that our parishioners live in a vast area, the children and teenagers are not able to come to church, unless their parents transport them. The Armenian church cannot reach all the Armenian families, it is up to our families to help their children by bringing them to our Sunday School and Armenian School.

4. FUNERALS. - The number of deaths has decreased to 41. We are happy for this, but on the other hand, we notice that the old generation is coming to an end. Twenty years ago during the morning services usually we had 60-70 persons. Today we have only 2-3. Most of them are gone and the rest need transportation to come to church. At all funerals we have delivered eulogies in Armenian or in English. We have visited the families to comfort them.

5. OFFICE WORK. - Though the ritual activities are diminished, the office work has multiplied. In the past one telephone line was plenty, at present two lines are not enough. The mailings are multiplied, and according to the Cambridge Post Office we have the most mailings in this area. This in itself explains our office situation. We have enough work in the office, to occupy a full time manager, and the office personnel. Besides the parish duties we have done all the work of a manager with great love and devotion for the welfare of our beloved church.

6. PARISH COUNCIL. - We have presided at all Parish Council meetings, and helped this body by undertaking some of its duties. In recent years, our Parish Council has included some young men. It is presently chaired by Mr. Arthur A. Apkarian who is the youngest member. We had increased our membership to 15, but found that it wasn't practical, so it will be decreased to 11. Many important duties were undertaken by the Parish Council, Diocesan delegates (who were invited to each Parish Council meeting and myself, with a sense of brotherhood and good fellowship.

Special commendation must be made to Mr. Nubar Hintlian, Diocesan delegate, who has attended every meeting and has fulfilled, with devotion, all responsibilities with which he was charged.



7. OFFICE PERSONNEL. - Our daily activities are handled by Mrs. Grace Hagopian, bookkeeper, and Mrs. Rose Mamishian, secretary. Mrs. Hagopian, who works two days a week as accountant, is very critical towards her job. She keeps all her books with great care in perfect regularity. She writes checks for bills only if they have received our signed approval. Our auditing committee commended highly her capable ability at keeping the books. Mrs. Mamishian works five days a week. She is everything in the office. She is a walking machine. We mean that she works while talking, while walking, while sitting. A wonderful atmosphere reigns in our office. Both girls feel themselves as authentic daughters of this spiritual House.

8. DEACONS. - We have four deacons and four subdeacons who serve on the altar on Sundays during the Divine Liturgy. Due to the knowledge of sharagans we have the morning services in good order. Our deacons are Leon Terzian from Brockton, Deran Dinjian, Peter Arakelian and Vahe Tashjian from Peabody. Due to a heart condition Mr. Tashjian was hospitalized for several months. By the Grace of God the prayers of our congregation were answered and he is presently back performing his duties. The subdeacons are Karekin Bedrosian, Souren Medzorian, Roupén Kiredjian and Gregory Krikorian, who participate by singing, incensing and holding the Kushotz. Our acolytes are Sunday School students, who we believe will learn and love their duties and in the future will serve various integral roles in the church.

9. CHOIR. - Our choir is the splendour of our church. In the Armenian church the choir plays a great role due to the fact that all the services are by chanting. We would say that the beauty and the mystery of our church is there because our services are mostly worship. We praise God by worshipping Him. Our choirmaster, our brother-in-Christ, the Very Reverend Oshagan Minassian, is doing his best to encourage the young people to join the group. With the addition of the new members and the faithful attendance of present choir members, we know that then our choir, under his capable leadership, will become the best in the Diocese. The executive body of the choir keeps the social and organizational activities alive. During the year the choir did have the misfortune of losing one of their long-time members, Ned Haroutunian, who had served his church, with love for nearly forty years, starting at a very early age.

10. SEXTON. - One of our assistants is the sexton of our church, deacon Peter Arakelian, who keeps the church clean and everything in order. He also participates in all church services and rituals. He prints all the addresses of the mailings and cleans the parish house. To serve his church is a great spiritual comfort for him.

11. GUEST CLERGYMEN. - May 23, Der Vasken, the pastor of the city of Kirovakan in Armenia, who was sent by His Holiness Vasken I Catholicos of All Armenians to participate at our Diocesan Clergy conference, visited our church. He celebrated the Divine Liturgy and delivered the sermon. July 25, Archbishop Tiran Nersoyan, one of our former primates, gave a surprise visit to our church. He delivered the sermon. September 26, Archbishop Sion Manoogian, our former primate, was invited on the occasion of the tenth anniversary of our church. He celebrated the Divine Liturgy and delivered the sermon.

12. DIVINE LITURGY CELEBRATION IN OTHER CHURCHES. - During the year we celebrated the Divine Liturgy and delivered sermons in the following churches: February 18, at the St. James Armenian Church, in Watertown on the occasion of the feast of Vartanantz. June 13, at the Episcopal Church of the Incarnation, in Lynn, for our parishioners of the North Shore. June 27, St. James Armenian Church again due to the fact that our church was in the progress of being painted. December 5, at St. Vartan Cathedral, New York, and in the same afternoon our Erevan chorus presented a concert at Kavookjian Auditorium.

13. TENTH ANNIVERSARY OF OUR CHURCH. - On September 26 we solemnly celebrated the tenth anniversary of the consecration of our church. We are happy that our Catholicos, the Supreme Head of our church, had taken into consideration this celebration and had congratulated our parish by sending a telegram. And also, on this solemn occasion, He had sent his gift, the beautiful painting of the Madonna for our main altar, which was consecrated on the same morning by His Grace Archbishop Sion Manoogian. His Grace also had consecrated our church ten years ago when he was the primate of our diocese. On the same afternoon a grand banquet was held at the Statler-Hilton Hotel with a noteworthy program. The highlight of the evening was the burning of our mortgage in the most beautiful way. On the occasion of the celebration we published a program book which contains the history of our new church.

14. CHURCH SUBORDINATE BODIES. - We wish to

a. Women's Groups: - We wish to commend our Senior and Young Women's Auxiliaries, who serve their church with unselfish devotion throughout the year. We all admit that these two groups are the backbone of the church.

b. Youth Groups: - We are also satisfied with zealous movement of our A.C.Y.O.A. Juniors. We hope that in the future they will be the backbone of our church. The Seniors need help for re-organization. Their argument is that when they start to attend college they are dispersed here and there in different sections (or milieus).

c. Sunday School. - During the first half of the year we made our monthly visits and talks to the children instructing them on religion. But beginning the present school year we stopped our visits due to the new system of organizing the school. We have a young seminarian, Mr. George Krikorian, as Religious Youth Coordinator, who is practicing this new method. We hope and believe that he will succeed. He sends the children to the church at different hours, so that they learn and study about the various parts of the Divine Liturgy.

d. Armenian School. - The Armenian School has a new Committee under the able chairmanship of Jack Papazian. The school superintendent, Mr. Roupen Kiredjian, changed the system of the classes. He decreased the number of the teachers, but formed a stronger program for the teaching. We also participate in teaching the Armenian language and culture to the alumni class on Saturday mornings.

15. DAJAR NEWSLETTER. - Dajar is printed ten issues during the year. We are happy that all parishioners are interested in its news. Though it is a small magazine, it takes too much time to compile. Specially when our organizations do not send their news at the right time. It is a bilingual paper and it is our desire to enlarge it but would be an expensive proposition.

16. VISITATIONS. - We have visited our members who have been hospitalized whenever we were informed about them. It must be known to all parishioners that our church is not a local church, so that we may visit a certain hospital on a certain day during the week and look for patients. The area which belongs to our church is very vast and our parishioners are dispersed over at least one hundred towns. We cannot go to all hospitals and ask for Armenian patients. In order to help us and save our time, we beseech our parishioners to telephone the office and give the names of the patients and the hospitals. They may be sure that each patient will be visited and prayed for. We have visited all mourners to comfort them. Also, we have prepared all the "in lieu of flowers" donation lists.

17. APPRECIATION. - We appreciate heartily the Parish Council and all church sub-ordinate bodies and our parishioners for their untiring activities, unselfish devotion, sacrifices, and church lovingness, through which our community, our church and the Armenian Nation became the owners of this magnificent edifice.

May the Good Lord keep our beautiful church for centuries, so that coming generations may pray in it and be proud of it. Many donors and people who sacrificed to build it, are no longer with us. May the Almighty Godd keep their souls in peace in eternity and grant long, healthy and prosperous lives to those who still worship Him in this church and Keep it for His Glory.

18. THANKS. - We express our sincerest thanks to our Parish Council, Diocesan Delegates, Sub-ordinate bodies of our church, to our brother-in-Christ the Very Reverend Father Oshagan Minassian, to our brothers, the deacons, our choir, our organist, our gracious secretaries, our sexton, the custodian, parishioners, and all those who helped in facilitating our duties for the progress and the welfare of our church.

May the Good Lord be aware of their sacrifices and grant them accordingly.

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՄԱԿԱՆ ԽՈՐՀ ՈՒՐԴԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1971 ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԵԱՆ



Թեմական Կանոնադրութեան տրամադրութեանց հետեւելով, հաճոյքով կը ներկայացնենք Միական Խորհուրդիս 1971 տարեշրջանի գործունէութիւնը այս Տարեկան Միական ժողովին, ամփոփ կերպով:

1. ՄԱԿԱՆ ԽՈՐՀ ՈՒՐԴԻ ՎԱԶՄԸ.- Համաձայն նախանցեալ տարուան Միական ժողովի որոշման, այս տարի Միական Խորհուրդիս կազմը բարձրացաւ 11էն 15 անդամի, որու մասին յատուկ տրամադրութիւն մը կայ Թեմական Կանոնադրութեան մէջ: Միական Խորհուրդիս վիճակաւ դադարող անդամները եղան՝ Պարոններ Արչի Խոլլիկեան, Փիթըր Կիւլխասեան, Տիրան Մաղիկեան, Թամ Ստեփանեան, Յրէտ Ջէյթունճեան եւ Արթըր Աբգարեան: Ասոնցմէ հետեւեալները վերընտրուեցան՝ Պարոններ Արչի Խոլլիկեան, Փիթըր Կիւլխասեան, Տիրան Մաղիկեան, Արթըր Աբգարեան եւ Թամ Ստեփանեան: Իսկ նորընտիրները եղան՝ Րիչըրտ Ջէյթունճեան, Գրիգոր Խաչատուրեան, ձան Տէնիըլսըն երկու տարուան պաշտօնավարութեան համար եւ Արթըր Փերեցեան ու Հէրըլտ Ջուլալեան՝ մէկ տարուան: Հէրըլտ Ջուլալեան ընտրութենէն ետք հրաժարեցաւ առողջական պատճառով. որով անոր տեղը հրաւիրուեցաւ յաջորդ առաւելագոյն քուէ ստացող ձերի Օտապաշեանը: Ուստի 1971 տարեշրջանի գործունէութեան համար դիւանը կազմուեցաւ ըստ հետեւեալին.-

Պարոններ	Արթըր Աբգարեան	Ատենապետ
	Փիթըր Թալանեան	Փոխ-ատենապետ
	Արամ Տէր Յակոբեան	Ատենադպիր
	Րիչըրտ Ջէյթունճեան	Փոխ-ատենադպիր
	Տիրան Մաղիկեան	Գանձապահ
	Թամ Ստեփանեան	Փոխ-գանձապահ
	Արչի Խոլլիկեան	Խորհրդական
	Փիթըր Կիւլխասեան	Խորհրդական
	Արտաշէս Տէր Անանեան	Խորհրդական
	Ալպըրդ Թալանեան	Խորհրդական
	Արթըր Փերեցեան	Խորհրդական
	ձան Տէնիըլսըն	Խորհրդական
	Գրիգոր Խաչատուրեան	Խորհրդական
	ձան Խոլլիկեան	Խորհրդական
	ձերի Օտապաշեան	Խորհրդական

Տարուան մը գործունէութեան փորձէն ետք ի յայտ եկաւ որ Միական Խորհուրդի կազմին համար 15 անդամներու թիւը շատ է: 1971 Յունուար 25ին գումարուած Տարեկան Անդամական ժողովը իրաւասութիւն տուած ըլլալով Միական Խորհուրդին՝ իր կազմին մէջ թիւի փոփոխութիւն կատարել, յարմար տեսնուեցաւ որ դարձեալ նախկին թիւին իջեցուի կազմին թիւը: Հետեւաբար այս տարի 11ի հաշիւով ընտրութիւն պիտի կատարուի: Նկատի առնելով որ անցեալ տարի ընտրուողներէն տակաւին ութը հոգի մէջ մէկ տարի պաշտօնավարելու ժամանակաշրջան ունի, ուստի այսօր պիտի ընտրուի միայն երեք հոգի: Այս տարի դադարողներն են՝ Փիթըր Թալանեան (որ անձնական գործի բերումով չուզեց իր թեկնածութիւնը դնել), Արամ Տէր Յակոբեան (որ հիւանդութեան պատճառաւ քաշուեցաւ), Ալպըրդ Թալանեան, Արտաշէս Տէր Անանեան, ձերի Օտապաշեան եւ Արթըր Փերեցեան:

2. ԺՈՂՈՎԱՆԵՐ ԵՒ ԴԻՒԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.— Խորհուրդս իր հերթական նիստերը կանոնաւոր կերպով գումարեց երկու շաբաթը անգամ մը, բաց ի ամրան ամիսները, երբ ունեցաւ ամիսը մէկ ժողով: Ունեցաւ նաեւ բացառիկ գումարումներ եւ հանդիպումներ՝ անհրաժեշտ խնդիրներու կարգադրութեանց համար: Ունեցաւ նաեւ անդամական բացառիկ ժողով մը, կարգ մը հարցեր լուծելու համար: Մեր բոլոր նիստերը գումարուեցան կանոնաւոր եւ գործակցական ոգիով, որով դարձան արդիւնաշատ՝ յօգուտ եկեղեցւոյ պայծառութեան: Մեր հոգեւոր հովիւը՝ Արժ. Տ. Բաբգէն Ա. Քհնյ. Մագսուտեան՝ միշտ նախագահելով մեր ժողովներուն մեծապէս օժանդակեց մեզի եւ իր փորձառու ցուցմունքներով եւ առաջնորդութեամբ մեր օրակարգերը արդիւնաշատ ընծայեց եւ գրասենեակի դիւանական գործերը յանձնաձեռք մեծ կարողութեամբ եւ ջանադրութեամբ: Այս շրջանին գումարեցինք 24 երկշաբաթեայ նիստեր:

3. ՊԱՇՏՕՆԵՆԻ ԹԻՒՆ.— Մեր եկեղեցւոյ վճարովի պաշտօնէութիւնը կը բաղկանայ հետեւեալ անձերէ.—

- ա.— Արժ. Տ. Բաբգէն Ա. Քհնյ. Մագսուտեան, Հոգեւոր Հովիւ:
  - բ.— Հոգ. Տ. Օշական Վրդ. Մինասեան, Դպրապետ:
  - գ.— Տիկ. Կրէյս Յակոբեան, Հաշուակալ:
  - դ.— Տիկ. Վարդուհի Մէմիշեան, Թարտուղարուհի:
  - ե.— Պ. Ճորճ Գրիգորեան, Կիրակնօրեայ Դպրոցի Կազմակերպիչ:
  - զ.— Տիկ. Հելլըն Մուրատեան, Երգահանահարուհի:
  - է.— Պետրոս Սրկ. Առաքելեան, Լուսարար:
  - ը.— Պ. Ճոզէֆ Աշճեան, Մշակութային շէնքի հոգատար:
- Ասոնցմէ երկուքը նորեկներ են: Պ. Ճորճ Գրիգորեան տարուան մը փորձ պիտի կատարէ իր նոր մեթոտով Կիրակնօրեայ Դպրոցը կազմակերպելու համար: Իսկ Պ. Ճոզէֆ Աշճեանը՝ որու մասին անցեալ տարուան տեղեկագրին մէջ ակնարկութիւն ըրած էինք, ապացուցուց թէ մաքրասէր եւ աշխատասէր անձ մըն է:

4. Ս. ԵԿԵՂԵՏԻՈՅՍ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ.—

- ա.— Եկեղեցասէր Երէց Տիկնանց Միութիւն:
- բ.— Եկեղեցասէր Երիտասարդ Տիկնանց Միութիւն:
- գ.— Չըլսիի Եկեղեցասէր Տիկնանց Միութիւն:
- դ.— Լին-Սէյլըմ-Փիպատիի Եկեղեցասէր Տիկնանց Միութիւն:
- ե.— Արանց Միութիւն:
- զ.— Դպրաց Դաս:
- է.— Կիրակնօրեայ Վարժարան:
- ը.— Շաբաթօրեայ Հայ Դպրոց:
- թ.— Հայաստանեայց Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութիւն (Երէցներ):
- ժ.— Հայաստանեայց Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութիւն (Կրտսերներ):
- ժա.— Երեւան Երգչախումբ:
- ժբ.— Թրինիթի Լիկ(որ կը գործէ որպէս օժանդակ Երիտասարդ Տիկնանց Միութեան):

Երախտագիտութեամբ ու գնահատանքով կ'ուզենք յիշել հոս թէ վերոյիշեալ մարմինները միշտ ալ մեր եկեղեցւոյ պայծառութեան համար աշխատած եւ իրենց օգնութեան բաժինը բերած են շօշափելի արդիւնքներով: Իւրաքանչիւր մարմին առանձին իր տեղեկագիրը ունենալուն չենք ուզեր հոս մանրամասնութեանց մէջ մտնել:

5. ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐ.— Անցնող չորս տարիներու ընթացքին մեր թեմական պատգամաւորները եղան՝ Տիարք նուպար Հինգլեան, Արչի Խոլլիկեան, Չարլս Կարապետեան, ձան Տէվէճեան եւ Հայկ Ժամկոչեան, որոնք թեմական պատգամաւորական ժողովներու մասնակցեցան: Կ'ուզենք գնահատանքով արտայայտուիլ թէ անոնք իրենց երթելեկի, բնակութեան եւ այլ ծախքերը ամբողջութեամբ իրենք հոգացին ժողովներու առիթով: Այս տարի լրացած է իրենց պաշտօնավարութեան շրջանը եւ ընտրութիւն պիտի կատարուի: Անձնական զբաղումներու պատճառաւ վերընտրութեան համար իրենց թեկնածութիւնները չուզեցին դնել Չարլս Պ. Կարապետեան եւ Հայկ Ժամկոչեան: Այս տարի թեմական պատգամաւորական ժողովը պիտի գումարուի Թրոյի մէջ Լոյսի սիկլոք:



11. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ.— Փետրուար 18ին, Հինգշաբթի երեկոյ Ուոթթրթաուենի Ս. Յակոբ Եկեղեցւոյ Մխական Խորհուրդին գործակցութեամբ միացեալ տօնակատարութիւն ունեցանք: Մեր Տէր Հայրը պատարագեց եւ Հայերէն լեզուաւ քարոզեց Ս. Յակոբ Եկեղեցւոյ մէջ եւ իրենց հովիւը՝ Արժ. Տ. Տաճատ ԹՀՆՅ. Դաւիթեան՝ քարոզեց անգլերէն լեզուաւ:

12. Ս. ԷՋՄԻԱՄՆԻ ՄԻԻՌՈՆՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՅԻԼՄԻ ՃՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ.— Ապրիլ 30ին Մշակութային Սրահին մէջ Առաջնորդարանէն ղրկուած Միւռոնօրհնութեան Յիլմր ցուցադրեցինք հոծ բազմութեան մը ներկայութեան հոգեկան գոհացում պատճառելով բոլորին: Այս ժապաւէնին առընթեր ցուցադրուեցաւ նաեւ 'Մենք Հայաստան Գացինք' երիտասարդական ժապաւէնը, որ մեծապէս հետաքրքրեց մեր երիտասարդութիւնը եւ աւելցուց անոնց սէրը հանդէպ Մայր Հայրենիքի:

13. ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՆԴԵԱՆ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ.— Այս տարի Առաջնորդարանի կարգադրութեամբ մեր թեմի նախկին առաջնորդներէն, ապա Կիլիկիոյ Կաթողիկոս, Գարեգին Հայրապետին ծննդեան հարիւրամեակը նշուեցաւ ամբողջ թեմին մէջ: Մենք ալ Ս. Յակոբ Եկեղեցւոյ Մխական Խորհուրդին գործակցութեամբ այս մեծ հայու յիշատակը տօնեցինք Հոկտեմբեր 24ին, Ուոթթրթաուենի Մշակութային Կեդրոնին մէջ պատշաճ յայտագրով մը եւ հոծ բազմութեան մը ներկայութեան:

14. ԴԱՏՏԱՀԱՆԴԵՍ.— Ս. Եկեղեցւոյ տարեկան դաշտահանդէսը եւ մատաղօրհնութիւնը տեղի ունեցաւ Յունիս 20ին Արարատ դաշտին վրայ, ի Մէյնարտ: Դաշտահանդէսի Յանձնախումբը բաղկացած էր Մխական Խորհուրդի հետեւեալ անդամներէ՝ Տիարք Արթըր Աբգարեան, Թամ Ստեփանեան, Արտաշէս Տէր Անանեան, Ալպըրդ Թալանեան եւ Արթըր Փերեցեան: Յանձնախումբը իր կարելին ըրաւ որպէս զի յաջող ձեռնարկ մը դառնայ ան, որուն օժանդակեցին Մխական Խորհուրդի միւս անդամները, Տիկնանց Միութեանց ու միւս մարմիններու անդամ-անդամուհիները: Դաշտահանդէսի զուտ հասոյթը եղաւ 1530.00 տոլար:

15. ԿՏԱԿ-ՆՈՒԻՐԱՏ ՈՒՌՈՒԹԻՒՆԹ.— Տարուան ընթացքին ստացած ենք հետեւեալ կտակ-նուիրատուութիւնները.—
- ա.— Բիւզանդ Պէշկէօթիւրեան կտակէն 5,000 տոլար, ինչպէս նաեւ երկու արժեթուղթ: Այս կտակին ամբողջական եւ լիակատար մանրամասնութիւնները պիտի տրուին այն ատեն երբ բոլոր արժեթուղթերը եւ գումարները մեր ձեռքը հասնին: Ճարդ ստացուած արժեթուղթերու մանրամասնութիւնները կ'երեւին առանձինն, տարբեր էջի մը վրայ: Բոլոր արժեթուղթերը պահուած են Գուլիճ դրամատան Սէյճ Տիֆագիթին մէջ Եկեղեցւոյ անունով:
  - բ.— Յլորիտայի մէջ մահացալ նախկին Վրէթաբնակ Յակոբ Աւագեանի կտակէն 4,590.99 տոլար:
  - գ.— Հանգուցեալ Նազարէթ ձերանեանի կտակէն 1,032.24 տոլար:
  - դ.— Հանգուցեալ Մանուէլ Ունանեանի կտակէն 100.00 տոլար:
  - ե.— Հանգուցեալ Փօլ Ճաֆէրեանի կտակէն 50.00 տոլար:
  - զ.— Ուրիշ հանգուցեալի մը կտակէն, որուն անունը չ'ուզուի որ հրապարակուի, 100.00 տոլար:
- Ասոնցմէ զատ մեզի ծանօթ երեք չորս կտակներ կան, որոնք մեզի պիտի փոխանցուին երբ գործողութիւնները վերջանան:

16. ՄԵՐ ԿՈՂՄԷ ԵՂԱՄ ՆՈՒԻՐՆԵՐ.— Տարուան ընթացքին Մխական Խորհուրդիս անունով եղած են հետեւեալ նուիրատուութիւնները.—

- ա.— Թրոյի նորակառոյց Հայաստանեայց Եկեղեցւոյ 125.00 տոլար: Այս գումարը Եկեղեցւոյ անունով նուիրեց թեմական պատգամաւոր Պ. Նուպար Հինդլեան:
- բ.— Կիրակնօրեայ Դպրոցի երկու տեսուչներուն եւ եւկու ուսուցիչներուն Մայր Տաճարի մետալներ եւ միւս ուսուցիչներուն ալ մէյ մէկ օրինակ 'Հայաստանեայց Եկեղեցւոյ Խորհուրդները եւ սուրբերը' անուն անգլերէն զիրքերէն առ ի գնահատանք իրենց ծառայութեանց համար, 115.00 տոլար արժողութեամբ:

- դ. — Հայաստանեայց Եկեղեցւոյ Հայ Երիտասարդաց Միութեան Հայագիտական ծրագրին համար 25.00 տոլար:
- դ. — Մեր երիտասարդներու պասքէթ-պոլի համազգեստներուն համար 90.00 տոլար:
- ե. — Մեր Հայ Դպրոցին 200.00 տոլար:
- զ. — Իսթանպուլի Ս. Խաչ Դպրեվանքի ֆընտին 100.00 տոլար:
- է. — Առաջնորդարանէն եկած վիճակահանութեան տոմսակի մը համար 10.00 տոլար:
- ը. — Երիտասարդ Տիկնանց Միութեան քոթիլեճնի յայտագիր-գրքոյկին 100.00 տոլար:

17. ԱՐԺԵԹՈՒՂԹԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ. — Նկատի առնելով որ Ս. Եկեղեցիս բաւականաչափ արչեթուղթեր ունի եւ որպէս զի վնասով դուրս չգայ, մասնաւոր յանձնախումբ մը նշանակուեցաւ այդ գործով զբաղելու եւ արժեթուղթերը բարձրանալուն պէս ծախելու եւ ստացուած գումարը դրամատան մէջ պահելու համար: Այս յանձնախումբն անդամներն են՝ Տիարք ձան Սուրսուրեան, Կրէկըրի Խաչատուրեան, Փիթըր Թալանեան, ձան Տէվէճեան եւ Ռիչըրտ Ջէյթունճեան:

18. ԹԵՄԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ. — Այս տարի Թեմական Շրջանային ժողով մը տեղի ունեցաւ Լոզէլի մէջ: Դժբախտաբար ժողովին հրաւիրագիրը ժողովի թուականէն երեք օր առաջ հասած ըլլալով, կարելի չեղաւ ժողովին մասնակցիլ: Այս ժողովին օրակարգին գլխաւոր հարցը եղած է Առաջնորդարանի անցեալ տարուան ունեցած 60,000 տոլարի բացը: Թեմական Պատգամաւորական ժողովին մէջ Առաջնորդարանի տարեկան 300,000 տոլարի պիւտճէին վրայ քուէարկուած է, առանց միւս բացին վրայ խօսելու: Այս գումարը Առաջնորդարանը եկեղեցիներու վրայ բաժնած է, եւ եկեղեցիներէ կազմուած ներկայացու իջներով յանձնախումբ մը հատը 25.00 տոլարի վիճակահանութեան տոմսակներ հանած է: Դժբախտաբար մեր համայնքին մէջ կարելի չեղաւ այդ տոմսակները ծախել, հետեւաբար անոնց փոխարժէքը եկեղեցւոյ գանձէն տրուեցաւ: Ասիկա մեր տարետուրքէն դուրս բացառիկ տուրք մը հանդիսացաւ: 1972 տարուան համար ալ բարձրացած է մեր տուրքը, 9,500.00 տոլարի:

19. ՍՐԱՀՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ. — Այս տարի կրկին վարձու տրուեցաւ Մշակութային շէնքի վարի մասը Մոնթեսորի ամերիկեան դպրոցին ամսական 1600 տոլար վարձքով եւ տասը ամսուան շրջանով: Թէեւ կարգ մը դժուարութիւններ կ'ունենանք տեղի նեղութեան պատճառաւ, սակայն ստիպուած պիտի համակերպինք մինչեւ որ ինքզինքնիս գտնենք: Մեր սրահները, փոխան տարեկան որոշ նուէրի մը կը գործածեն նաեւ Արլինկթընի Դպրոցասէր Տիկնանց Միութիւնը, Վարդանանց Ասպետ Եղբայրակցութեան Արարատ եւ Հայկ դահլիճները իրենց կանանց բաժիններով ամսաժողովներու համար: Իսկ պարբերաբար ալ հարսանեկան ընդունելութեանց համար զանազաններու կողմէ:

20. ՄԱՍՆԱԻՈՐ ԳՆԱՀԱՏԱՆՔ. — Ծխական Խորհուրդս մեծապէս գնահատելով Թեմական պատգամաւոր Պ. Նուպար Հինդլեանի մեր եկեղեցւոյ պայծառութեան համած մատուցած բազմապիտի գործունէութիւնը եւ ծառայութիւնները եւ ծրայական Խորհուրդիս բոլոր ժողովներուն իր ներկայութիւնը պատուոյ անդամ հռչակեց զինք եւ խնդրեց Առաջնորդ Սրբազանէն որ նկատի առնէ անոր բացառիկ ծառայութիւնները ու մասնաւոր գրով մը գնահատէ: Ուրախ ենք որ Առաջնորդ Սրբազան Հայրը մեծ հաճոյքով կատարեց մեր խնդրանքը Պ. Նուպար Հինդլեանին յղելով գնահատութեան եւ օրհնութեան գիր մը:

21. ՏԱՃԱՐ ԱՍՍԱԹԵՐԹԻԿԸ. — Այս ամսաթերթիկը կը հրատարակուի տարեկան տասը թիւ հայերէն եւ անգլերէն լեզուներով, կանոնաւոր կերպով եկեղեցւոյ լուրերը տանելով 1400 ընտանիքներէն ներս: Թէեւ ծաւալը փոքր է, բայց գործը եւ ծախսը շատ է: Շատ քիչեր կը վճարեն անոր բաժնեգիրը, կամ նուէրներ կ'ընեն, որոնց ցանկը կ'երեւի թերթիկին մէջ: Երանի թէ ամէն ստացող նշանակուած տարեկան երկու տոլարը վճարէ, որպէս զի Օխակա՛ն Խորհուրդիս գանձին վրայ չծանրանայ անոր ծախսը:



22. ԱՆԴԱՄԱԳՐԱԿԱՆ.— Ուշագրաւ պարագայ մըն է թէ մեր եկեղեցւոյ անդամներէն շատերը արդէն տարիքնին առած ըլլալով հետզհետէ կը մեռնին նուազեցնելով անդամներու թիւը: Ներկայիս ունինք 583 անդամ: 1971ին անդամագրուած են 27 անձեր: Պէտք է որ Ս. եկեղեցւոյս օրհնութիւնները եւ ծառայութիւնները ընդունող եւ վայելող բոլոր հաւատացեալներ անդամագրուին զօրացնելու համար եկեղեցւոյ ընտանիքը: Ասոր համար իւրաքանչիւր անդամ պարտք պէտք է զգայ իր ոչ-անդամ ազգականին կամ բարեկամին թելադրել որ իր օրինակին հետեւի: Եկեղեցի մը այնքան բարգաւաճ կը դառնայ որքան շատնան իր անդամները:

23. ԾԳՆԱԿԱՆ ՀՈՎԻԻԻ ՀԱՐԾ.— Քանի մը տարիներէ ի վեր այս հարցը սեղան կը բերուի մեր Տէր Հօր կողմէ: Նկատի առնելով իր տարիքին հետզհետէ յառաջացումը, մեր համայնքին տարողութեան ընդարձակութիւնը, երիտասարդներու ցրուածութիւնը եւ ծխական գործին առատութիւնը, ինչպէս նաեւ զաւիթ հովիւի համայնքիս մէջ ունենալիք փորձառութիւնը՝ Ծխական Խորհուրդս հաստատեց Տէր Հօր առաջարկը եւ խնդրեց իրմէ որ դիմէ Առաջնորդ Սրբազան Հօր այս խնդրոյ առընչութեամբ: Իր դիմումներուն ցարդ ծխական գատասխան կու տար Առաջնորդ Սրբազանը տրամադրելի հովիւ չունենալուն համար: Սակայն այսօր ի վիճակի ենք յայտնելու թէ Առաջնորդ Սրբազան Հայրը խոստացաւ զոհացում տալ մեր փախիսքին: Լիայոյս ենք թէ 1972 տարուան ընթացքին կ'ունենանք մեր օգնական հովիւը:

24. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱՆՔ ԵՒ ԾՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Ծխական Խորհուրդս իր սրտագին գնահատութիւններն ու շնորհակալութիւնը կ'ուղղէ մեր բոլոր ծխականներուն եւ եկեղեցւոյ բարեկամներուն՝ իրենց նիւթական գոհողութիւններուն համար, որով կարելի եղաւ մեր եկեղեցին պարտքէ ազատել եւ տարեկան ծախսերը հոգայ: Նմանապէս եկեղեցւոյ բոլոր մարմիններուն եւ անոնց անդամներուն՝ որոնց ջանքերուն շնորհիւ եկեղեցւոյ շուրջ եղած գործունէութիւնը միշտ աշխոյժ մնաց: Մեր պաշտօնէութեան՝ որոնց նուիրումին շնորհիւ Լուսաւորչի կանթեղը միշտ վառ մնաց մեր տաճարին մէջ եւ Աստուած փառաբանուեցաւ, ինչպէս նաեւ եկեղեցւոյ, գրասենեակներու եւ յարակից շէնքերու գործունէութիւնը կանոնաւոր ընթացքի մէջ մնաց:

Ի վերջ բանիս կ'ուզենք նաեւ արտայայտուիլ մեր մասին, թէ՛ ջանացինք մեր կարողութեանց լաւագոյնը տրամադրել մեր հոգեւոր տան պայծառութեան ու կանգուն մնալուն համար:

Թող Աստուած վարձատրէ բոլոր զոհաբերողներն ու ծառայողները:

Ի դիմաց Ծխական Խորհուրդի

ԱՐԱՄ ՏԷՐ ՅԱԿՈՒԲԵԱՆ      ԱՐԹՐ ԱԲԳԱՐԵԱՆ      ԲԱԲԳԷՆ ՔՀՆՅ. ՄԱԳՍՈՒՏԵԱՆ  
Հայերէնի Ատենադպիր      Ատենապետ      Նախագահ

ՐԻԶԸՐՏ ԶԷՅԹՈՒՆՃԵԱՆ  
Անդլերէնի Ատենադպիր

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH

PARISH COUNCIL ANNUAL REPORT FOR THE YEAR 1971

In accordance with our Diocesan By-Laws, we present in the following pages the activities of the Parish Council for the year 1971.

1. PARISH COUNCIL MEMBERS. - According to a decision taken at the annual meeting of 1970, and in accordance with the By-Laws, in the year 1971, the number of Council members would be increased from 11 to 15. In 1971 the outgoing members of the Parish Council were: Archie Kolligian, Peter Goolkasian, Diran Zahigian, Tom Stephanian, Fred Zeytoonjian and Arthur Apkarian. Out of these at the annual assembly held on January 31, 1971 the following members were reelected Archie Kolligian, Peter Goolkasian, Diran Zahigian, Arthur Apkarian and Tom Stephanian. The newly elected members were: Richard Zeytoonjian, Gregory Khachadorian, John Danielson for two year term, and Arthur Peretzian and Harold Zulalian for a one year term. After the election Harold Zulalian was compelled to resign for personal reasons. Jerry Odabashian, who was next in line was invited to cover his term. The 1971 Parish Council was formed as follows:

Chairman	Arthur A. Apkarian	Advisors:	Archie G. Kolligian
Vice-Chairman	Peter Talanian	"	Peter Goolkasian
Secretary	Aram Der Hagopian	"	Ardashes Der Ananian
Assistant Secretary	Richard Zeytoonjian	"	Albert Talanian
Treasurer	Diran Zahigian	"	Arthur Peretzian
Ass't Treasurer	Tom Stephanian	"	John Danielson
		"	Gregory B. Khachadorian
		"	John Kolligian
		"	Jerry Odabashian

After a year's activity it was found that a Parish Council with 15 members was not practical. At last year's assembly power was given to the Parish Council to decrease its number of members. This year only 3 members will be elected, due to the fact that the remaining eight members have one more year to serve. Three of the outgoing members have submitted reasons for not running again, one for health reasons and the other two for business reasons, namely Aram Der Hagopian, Peter Talanian and John Kolligian. The others up for re-election are: Albert Talanian, Ardashes Der Ananian, Jerry Odabashian and Arthur Peretzian.

